

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇՇԽՈՒԹՅՈՒՆ

«Համազգային միասնականությունը որպես մեր ուժի, հզորության գրավական»

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան /ՀՀ ԳԱԱ/, Համաշխարհային հայկական կոնգրեսը /ՀՀԿ/, և Ռուսաստանի հայերի միությունը /ՌՀՄ/ ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարում են **2016թ. լավագույն գիտական աշխատանքների մրցույթ՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին՝ «Համազգային միասնականությունը որպես մեր ուժի, հզորության գրավական»** թեմայով:

Մրցույթի հիմնական նպատակն է ի մի բերել Հայաստանի Հանրապետության, Արցախի և հայկական սփյուռքի գիտնականների մոտեցումները ներկա դարի մարտահրավերներին դիմակայելու գործում համազգային միասնության դերի, նրա արժեհամակարգի և առանձնահատկությունների նկատմամբ և այդ ամենի արդյունքում ստանալ միասնության ապահովման համար առաջադրված խնդիրների լուծմանը նպատակաուղղված, կիրառական նշանակություն ունեցող գիտական աշխատանքներ:

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է արտացոլեն Հայաստանի անկախացման պատմական նշանակությունը, մեր հերոսական ժողովրդի ձեռքբերումները, համայն հայության միասնականությունն ու միակամությունը հայոց պետականության կայացման, համազգային նվիրական նպատակների իրականացման համար:

Մրցութային աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջը հետևյալն է՝ արտացոլել 21-րդ դարի մարտահրավերների պայմաններում համազգային շահերի շուրջ հայության տարբեր հատվածների համախմբման համար անհրաժեշտ խնդիրների վերլուծությունն ու դրանց լուծման եղանակների գիտական հիմնավորումները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության խնդիրը, որպես համազգային միասնության առանցքային արժեք ու առաջնահերթություն, պետք է առանձնահատուկ տեղ զբաղեցնի մրցութային աշխատանքներում:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի գիտնականները:

Մրցանակային ֆոնդը կազմում է 10 միլիոն դրամ: Նախատեսված է վեց անվանակարգ, յուրաքանչյուր անվանակարգի մրցանակային ֆոնդը կկազմի 1.600 000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար/ դրամ (1-ին մրցանակ՝ 800 հազ. դրամ, 2-րդ մրցանակ՝ 500 հազ.դրամ, 3-րդ մրցանակ՝ 300 հազ.դրամ):

Մրցանակակիրները կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ, ՌՀՄ և ՀՀ Սփյուռքի նախարարության պատվավոր դիպլոմների:

Մրցանակները սահմանվում են հետևյալ անվանակարգերում՝

1. Հայաստանի Հանրապետությունը և 21-րդ դարի մարտահրավերները:
2. Հայաստանի և համայն հայության անելիքները Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, հատուցման հասնելու խնդրում:
3. Արցախի հիմնահարցը և խնդրի վերջնական լուծման հեռանկարները համազգային միասնության համատեքստում:
4. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:
5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության խնդիրը որպես համազգային միասնության առանցքային արժեք և առաջնահերթություն:
6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հեռանկարները համազգային միասնության համատեքստում:

Մրցանակը տրվում է վերոնշյալ անվանակարգերով վերջին երեք տարում տպագրված գիտական մենագրության (մենագրությունների) կամ հոդվածաշարի համար:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ից /Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. +(37410) 524461, +(37410) 527530/ կամ Հիմնադրամի կայքից՝ <http://sdfund.sci.am>:

Փաստաթղթերի ներկայացման ձևը և ժամկետները

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարած «Համազգային միասնականությունը որպես մեր ուժի, հզորության գրավական» թեմայով 2016թ. լավագույն գիտական աշխատանքների մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

1. հայցողի դիմում-հայտը,
2. գիտական խորհրդի որոշումը,
3. անձնագրի պատճենը,
4. կենսագրական տվյալները (resume/CV),
5. վերջին հինգ տարում հրատարակված աշխատանքների ցանկը,
6. երաշխավորագրեր տրված 3 մասնագետների կողմից (նախընտրելի է, որ նրանցից մեկը լինի արտասահմանից): Երաշխավորագրերը ներկայացնել մասնագետի ստորագրությամբ,
7. մրցանակի ներկայացվող աշխատանքը:

Վերը նշված 5 և 6 կետերում նշված փաստաթղթերը ներկայացնել վավերացված իրավասու անձի/մարմնի կողմից երեքական օրինակով՝ առաջինը բնօրինակ, իսկ մնացածները՝ պատճենահանված:

Ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի այն կազմակերպության գիտական խորհրդի որոշումը, որտեղ աշխատում է հայտատուն: Փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև տվյալ բնագավառում գործող որևէ այլ կազմակերպության գիտական խորհրդի միջոցով:

Եթե ներկայացվող աշխատանքը կատարված է համահեղինակությամբ, ապա դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որն արտացոլի համահեղինակների մասնակցության չափը և ստորագրված լինի համահեղինակների կողմից:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ **2016 թ. ապրիլի 1-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ**: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն **2016թ. հոկտեմբերին**:

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. +(37410) 524461, +(37410) 527530:

Մրցութային հանձնաժողով

ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ, ՌՀՄ և ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարված
«Համագգային միասնականությունը որպես մեր ուժի, հզորության գրավական» թեմայով
2016թ. լավագույն գիտական աշխատանքների մրցույթի

ԴԻՄՈՒՄ- ՀԱՅՏ

Ներկայացվող աշխատանքի անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

Հայցող կազմակերպությունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

(կազմակերպության անվանում)

(կազմակերպության անվանում)

(կազմակերպության անվանում)

Աշխատանքի հեղինակը _____
(անուն, ազգանուն)

Համահեղինակ (ներ) _____
(անուն, ազգանուն)

(անուն, ազգանուն)

Հեղինակի աշխատանքի վայրը _____
(կազմակերպության անվանում, պաշտոն)

Աշխատանքի վայրի (կազմակերպության) հասցեն և փոստային ինդեքսը

Հեռախոս _____ Բջջային _____ Ֆաքս _____

Էլ. փոստ _____

Անվանակարգը՝

- Հայաստանի Հանրապետությունը և 21-րդ դարի մարտահրավերները:
- Հայաստանի և համայն հայության անելիքները Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, հատուցման հասնելու խնդրում:
- Արցախի հիմնահարցը և խնդրի վերջնական լուծման հեռանկարները համազգային միասնության համատեքստում:
- Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության խնդիրը որպես համազգային միասնության առանցքային արժեք և առաջնահերթություն:
- Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հեռանկարները համազգային միասնության համատեքստում:

Մրցանակի ներկայացվող աշխատանքին վերաբերող ստորև նշված 4 հարցերը հակիրճ պարզաբանել երեք էջի վրա:

1. Աշխատանքի էությունը - 1.5 էջ
2. Հայցողի գործունեության ոլորտը – 0.25 էջ
3. Հայցող կազմակերպության գործունեության ոլորտը – 0.25 էջ
4. Ներկայացված աշխատանքից սպասվելիք արդյունքները և հեռանկարները (արդիականությունը) – 1 էջ

Հայցողի հասցեն և փոստային ինդեքսը _____

Հեռախոս _____ Բջջային _____ Ֆաքս _____

Էլ.փոստ _____

Հայցման ամսաթիվը _____

Հայցողի ստորագրությունը _____